Հաստատում եմ՝
Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ»
հիմնադրամի տնօրեն Հարություն Մարության

ԿԱՐԾԻՔ

Է.00.01 «Հայոց պատմություն» մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար Հրանուշ Սահակյանի «Գերմանա-հայկական ընկերության հիմնադրումը և գործունեությունը 1914-2014 թթ.» ատենախոսության մասին:

Հրանուշ Ալբերտի Սահակյանը «Գերմանա-հայկական ընկերության հիմնադրումը և գործունեությունը 1914-2014 թթ.» ատենախոսությունում անդրադարձել է կազմակերպության ստեղծման նախադրյալներին, հիմնադրման մանրամասներին, կատարած աշխատանքներին և փորձել է գնահատական տալ, թե վերջինս ինչ փոփոխություններ է բերել գերմանական հանրության շրջանակներում հայ ժողովրդի պատմության, մշակույթի մասին ընկալումներում:

Ընդ որում, ընկերությունն իր գործունեությունն սկսել է մի ժամանակահատվածում, երբ Առաջին աշխարհամարտի տարիներին Թուրքիայի կողմից Հայոց ցեղասպանությունն իրականացվում էր նրա գլխավոր դաշնակից կայսերական Գերմանիայի իրազեկվածության պայմաններում, այդ երկրի դիվանագետների, հյուպատոսների, զինվորականների, միսիոներների և քաղաքացիական մասնագետների աչքի առաջ, որոնք այդ ժամանակ բավական պատկառելի թիվ էին կազմում:

Չնայած Գերմանիայի կանցլեր Բեթման Հոլվեգն առաջնորդվում էր այն գաղափարով, որ գերմանացիների միակ նպատակը մինչև պատերազմի ավարտը Թուրքիան իրենց կողքին պահելն է՝ անկախ նրանից՝ կզոհվեին հայերը, թե՝ ոչ, անգամ հրահանգել էր գերմանացի դիվանագետներին հաշտվել հայերի բնաջնջմանը՝ ելնելով Գերմանիայի շահերից, այնուամենայնիվ վերջիններիս հաղորդագրությունների ուսումնասիրությունը

փաստում է, որ նրանք աշխատել են առնվազն չեզոք դիրք զբաղեցրել հայերի հանդեպ, բացառությամբ մի քանիսի, քննադատել են թուրքական կառավարության կողմից իրագործվող հայկական հալածանքները, հերքել «հայկական ապստամբության» թուրքական կեղծիքը: Խոսելով Գերմանիայի պատասխանատվության մասին՝ նույն ժամանակ անհնարին է չհիշատակել նաև այն լայնածավալ մարդասիրական ջանքերը, որոնք իրականացրել են Գերմանիայում գտնվող հասարակական և եկեղեցական շրջանակները:

Ատենախոսը ԳՀԸ-ի գործունեությունը ներկայացնելիս հաշվի է առել Գերմանիայի մեղսակցության և պատասխանատվության հարցի վերաբերյալ առկա նրբությունները:

Ատենախոսը թարգմանաբար շրջանառության մեջ է դրել գերմանական նոր աղբյուրներ, որոնք արժեքավոր են ոչ միայն սույն թեմայի, այլ նաև հարակից մի շարք հարցերի համապարփակ ուսումնասիրության համար:

Հետաքրքրական են նաև կազմակերպության կողմից տպագրվող պարբերականները, ինչպես նաև որոշ աշխատություններ, հոբելյանական ժողովածուների բովանդակային վերլուծությունները, որոնք կարևոր դեր էին խաղում հայերի մասին դրական պատկերացում ձևավորելու, կազմակերպության համակիրների թիվն ավելացնելու գործում:

Ատենախոսն առաջին գլխում ներկայացրել է կազմակերպության ստեղծման նախադրյալները, կարևոր դերակատարում ունեցած անհատների՝ Յ. Լեփսիուսի, Պաուլ Ռոհրբախի, Մարտին Ռադեի, Էվալդ Շթիրի գործունեությունը, որոնք հայանպաստ շարժում են ծավալել իշխանությունների հարուցած դժվարություններին զուգահեռ:

Ատենախոսն անդրադարձել է նաև կազմակերպության Օսմանյան կայսրություն մեկնած պատվիրակների գործունեությանը, որը բարդ գործընթացներ էր ենթադրում. բացի նրանց անվտանգությանն առնչվող հարցերից, նրանք դուրս էին գալիս իրենց պետության շահերի դեմ, քանի որ մյուս կողմում համամարդկային բարոյական արժեքներն էին:

Առաջին գլխի շրջանակում հանգամանալի ներկայացվել է նաև Յ. Լեփսիուսի հայանպաստ բազմաբովանդակ գործունեությունը, կազմակերպության՝ Հալեպի և Մոսուլի

նահանգներում հայ գաղթականներին օգնություն տրամադրելու առաջարկության համար տարբեր գերատեսչություններին դիմելու և մերժվելու փաստերը, որն էլ ստիպել է կազմակերպությանը փորձելու գաղտնի ճանապարհներով, ինչպես նաև Խորհրդային Ռուսաստանի և Քառյակ միության միջև բանակցությունների համատեքստում՝ քայլեր ձեռնարկելու հնարավորինս պաշտպանելու համար հայերի շահերը:

Երկրորդ գլխում հեղինակի ուսումնասիրության առանցքը Հայոց ցեղասպանության դատապարտման, Փարիզի վեհաժողովում Հայկական հարցի հայանպաստ լուծման, ինչպես նաև հայ-գերմանական հարաբերությունների զարգացմանն ուղղված աշխատանքների կազմակերպման ընթացքն է:

Երրորդ գլուխը կազմակերպության վերակազմակերպման, 20-րդ դարավերջին և 21-րդ դարի սկզբին տարբեր ուղղություններով տարված գործունեությունն է: Հեղինակը վերլուծել է կազմակերպության պարբերականում հրատարակված հոդվածները, որոնց միջոցով կարելի է պատկերացում կազմել հայ-գերմանական տնտեսական, քաղաքական, մշակութային առնչությունների վերաբերյալ, ինչպես նաև Արցախի անկախության համար պայքարում ծավալած շարժմանը հայերին սատարելու ուղղությամբ, Սումգայիթի և Բաքվի հայերի ջարդերին և տեղահանության մասին տարբեր հարթակներում միջազգային հանրությանը իրազեկելուն:

Գիտաժողովների կազմակերպումը, գրքերի հրատարակումը, մշակութային միջոցառումների իրականացումը վերջին տարիներին եղել է կազմակերպության գործունեության կարևոր ուղղություններից մեկը, որին ատենախոսը նույնպես մանրամասն անդրադարձել է:

«Հայ-գերմանական միության» գերմանական հասարակության իրազեկմանն, երկկողմ հարաբերությունների սերտացմանն ուղղված գործունեությունն որոշակի ներդրում է ունեցել ցեղասպանության վերաբերյալ Բունդեսթագի 2005 և 2016 թթ. բանաձևերի ընդունման գործում:

Ատենախոսության գիտական հիմնական նորույթն այն է, որ ատենախոսը կարողացել է հնարավորինս ամբողջական ներկայացնել կազմակերպության գործունեությունը՝ հիմնվելով աղբյուրագիտական նյութերի վրա:

Հարկ է նշել, որ հեղինակին հիմնականում հաջողվել է լուծել իր առջև դրված խնդիրները: Ատենախոսության բոլոր գլուխներում տեղ գտած նյութն ատենախոսը հոդվածների տեսքով հրատարակել է գիտական պարբերականներում:

Հրանուշ Սահակյանի ատենախոսության սեղմագիրը համապատասխանում է հետազոտական աշխատանքի բովանդակությանը և նրա հիմնադրույթների համարժեք արտացոլումն է:

Միևնույն ժամանակ, ատենախոսությունը զերծ չէ նաև թերություններից և բացթողումներից, որոնցից մի քանիսի վրա կցանկանայինք հրավիրել ատենախոսի ուշադրությունը:

1. Հեղինակը չի օգտագործել և գրականության տեսության մեջ չի արտացոլել հարցին այս կամ այն չափով առնչվող անգլիալեզու գիտական աշխատությունները, մասնավորապես Վահագն Դադրյանի «Հայոց ցեղասպանության մեջ գերմանական պատասխանատվությունը: Գերմանական մեղսակցության պատմական վկայության տեսություն» (Vahakn N. Dadrian, *German Responsibility in the Armenian Genocide: A Review of the Historical Evidence of German Complicity* (Watertown: Blue Crane Books, 1996), XVI + 304 pp.) և Ստեֆան Իհրիգի «Արդարացնելով ցեղասպանությունը: Գերմանիան և հայերը Բիսմարկից մինչև Հիտլեր» (Stefan Ihrig, *Justifying Genocide: Germany and the Armenians from Bismarck to Hitler* (Cambridge, Ma: Harvard University Press, 2016), 472 pp) աշխատանքները:
2. Գերմանիայում հայանպաստ շարժման ծավալման և ընդարձակման համար նախադրյալների հարցին անդրադարձն աշխատանքում շատ հպանցիկ է: Արծարծվում է միայն հարցի արտաքին քաղաքական՝ Հայկական հարցին վերաբերող բաղադրիչը:

Գտնում ենք, որ աշխատանքը կշահեր, եթե պարունակեր առանձին անդրադարձ Գերմանիայում հայասիրական շարժման ծավալման մշակութային և կրոնական հիմքերի վերաբերյալ: Մեր համոզմամբ գիտական հետաքրքրություն է ներկայացնում՝ լայն առումով՝ Գերմանիայի հասարակական-քաղաքական, կրթամշակութային, գիտական և կրոնական շրջանակների, այնպես էլ մասնավորապես՝ Գերմանա-հայկական ընկերության (ԳՀԸ)՝ ազգությամբ գերմանացի անդամների՝ հայ ժողովրդի և Հայաստանի նկատմամբ հետաքրքրությունը և նրանց հայանպաստ գործունեությունը պայմանավորած պատճառների ու գործոնների ամբողջական ներկայացումը:

3. Ատենախոսը ներկայացրել է կազմակերպության հիմնական նպատակները, խնդիրները, անդրադարձել ժամանակի ընթացքում դրանցում տեղ գտած փոփոխություններին, առաջարկներին (էջ 24, 31, 65, 83, 87): Ցանկալի կլիներ անդրադառնալ նաև նպատակների իրագործման, խնդիրների լուծման հարցերում գրանցած արդյունքներին, դրանց տրվեին համապատասխան գնահատականներ տրվեին. ո՞ր ուղղությամբ, ո՞ր բնագավառներում և ինչքանով է հաջողել, կամ անդրադարձ լիներ դրական տեղաշարժեր չունենալու պատճառներին:
4. Նպատակահարմար կլիներ հավելվածի ձևով ներկայացնել ընկերության՝ տարբեր ժամանակների ղեկավար կազմը, անդամների թիվը, հրատարակած գրքերի ցանկը՝ չծանրաբեռնելով բուն շարադրանքը:
5. Ատենախոսության մեջ ոչ բավարար չափով է լուսաբանված ԳՀԸ եկամուտներին և ծախսերին վերաբերող հարցը: Դրան մեկ՝ խիստ հպանցիկ անդրադարձ կա էջ 58-ում «1.3. Մեծ եղեռնը կասեցնելու և հայ աղետյալներին փրկելու՝ դր. Լեփսիուսի և ԳԸՀ-ի ջանքերը 1915-1917 թթ.» ենթագլխի վերջում: Որևէ անդրադարձ չկա ԳԸՀ եկամուտների գոյացման աղբյուրներին և ծախսերի ուղղություններին: Հեղինակը, ճիշտ է, նշում է, որ հարցի վերաբերյալ սկզբնաղբյուրներում «վիճակագրական» տեղեկություններ չեն պահպանվել, սակայն մեր կարծիքով, նա պարտավոր էր ավելի հետևողական գտնվեր

նման տեղեկություններ հայթայթելու ուղղությամբ, քանի որ հարցը գիտական հետաքրքրություն է ներկայացնում և առանց այս հարցի լուսաբանման թեմայի գիտական հետազոտությունը թերի է:

6. 1913 թ. հայկական բարենորոգումների հարցի շուրջ դիվանագիտական գործընթացներում ապագա Գերմանա-հայկական ընկերության հիմքը կազմող Բեռլինի Հայկական կոմիտեի դերակատարությանն անդրադարձն աշխատանքում խիստ հպանցիկ է. մինչդեռ, դատելով Ա. Իսահակյանի՝ Ս. Վրացյանին ուղղված 1914 թ. ապրիլի 23-ով թվագրվող նամակից, որից մի քանի տող ատենախոսության հեղինակը մեջբերում է էջ 26, թիվ 78 ծանոթագրության մեջ, կոմիտեի դերը նշված գործընթացներում բավականին կարևոր է եղել: Գերմանացի գործիչների հայանպաստ դերակատարության մասին վկայություններ են պարունակում Հայաստանի Ազգային արխիվի ֆոնդ 57 (Ամենայն Հայոց կաթողիկոսի դիվան), ցուցակ 5-ում (Հայկական հարց) պահվող որոշ փաստաթղթեր:

7. Աշխատանքը կշահեր, եթե հեղինակն ավելի հանգամանալից ներկայացներ Սողոմոն Թեհլիրյանի դատավարության առնչությամբ ԳՀԸ և նրա անդամների գործունեությանը:

8. Վիճահարույց է ատենախոսության հեղինակի պնդումներն առ այն, որ ԳՀԸ ծավալած գործունեության, քարոզչական պայքարի արդյունքում նացիստական իշխանությունների կողմից հայերի՝ արիական ժողովուրդ լինելու իրողության հաստատման շնորհիվ Գերմանիայում և նրա կողմից ռազմակալված տարածքում բնակվող շուրջ 500.000 հայեր փրկվել են վերահաս ցեղասպանությունից (էջ 107, կրկին անգամ՝ էջ 111): Այս վարկածը որևէ գիտական հիմնավորում չի գտել ատենախոսության բովանդակության մեջ և այն հավանաբար հեղինակի պարզ ենթադրությունն է, որի ներկայացումը գիտական աշխատանքի մեջ առանց համապատասխան ապացուցողական բազայի ապահովման անընդունելի է:

9. Աշխատանքում հանդիպում են բառեր և շարահյուսական ձևեր, որոնք առօրյա խոսակցական, հրապարակախոսական, հուզական-գեղարվեստական երանգավորում ունեն, հարիր չեն գիտական շարադրանքի ոճին: Այսպես՝ *«Թողնենք, սակայն, այս ամենը»* (էջ 19), *«անհույս խոստումներ»* (էջ 61), *«Խոսքերն այստեղ ավելորդ են: Հայերի հարցում 1878 թ. Բեռլինի կոնգրեսից հետո եվրոպական մեծ տերությունների վարած երկդիմի քաղաքականության հետևանքները հայտնի են բոլորիս»* (էջ 96), *«հայերի դեմ պատրաստվում էր նոր եղեռն, հրեաների նման նրանք դատապարտվում էին ոչնչացման»* (էջ 98), *«Այստեղ կարող է հարց առաջանալ, թե ի՞նչ բանակցություններ է վարել ԳՀԸ-ի ղեկավարը կառավարության ներկայացուցիչների հետ բովանդակային առումով: Կարելի է, անշուշտ, կռահումներ անել, բայց քանի որ հարցի առնչությամբ չունենք անհրաժեշտ փաստեր, կխուսափենք դրանից»* (էջ 109) և այլն:

10. Հեղինակի եզրակացությունները «Եզրակացություններ» բաժնում տեղին կլիներ առավել վերլուծական դրույթներով ամփոփել ու գնահատել կազմակերպության գործունեությանը: Բացի այդ, «Եզրակացություններ» բաժնում ներկայացված որոշ մտքեր բոլորովին նոր են, մինչդեռ դրանք պետք է սկզբնապես արտացոլված, ձևակերպված լինեին ատենախոսության համապատասխան բաժինների շարադրանքում՝ որպես տվյալ բաժնում ներկայացված համապատասխան փաստերի և իրողությունների ամփոփում, և միայն դրանից հետո երկրորդվեին ատենախոսության վերջում: Այսպես, հեղինակը նշում է, որ XIX դարի 90-ական թթ. Գերմանիայի ավետարանական եկեղեցու ներկայացուցիչներ Լեփսիուսի, Ռոհրբախի և այլոց հայանպաստ ջանքերի շարժառիթը «կարեկցանքն էր, քրիստոնյայի՝ որպես Աստվածաշնչյան պատգամի հետևորդի խիղճը» (էջ 169): Այս միտքը, անկախ դրա ճիշտ կամ սխալ լինելուց, պետք է ձևակերպված և հիմնավորված լիներ համապատասխան բաժնում և միայն դրանից հետո՝ ատենախոսության ամփոփման մեջ:

Այս և նման փոփոխությունները հետագայում կարող են օգտագործվել հեղինակի կողմից գիրքը հրատարակման պատրաստելու ժամանակ:

Ամփոփելով նշենք, որ Հրանուշ Սահակյանի թեկնածուական ատենախոսությունը համապատասխանում է գիտության թեկնածուի աստիճան հայցելու ատենախոսություններին առաջադրվող պահանջներին, իսկ հեղինակը արժանի է Է.00.01 «Հայոց պատմություն» մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանին:

Կարծիքը հաստատվել է «Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» հիմնադրամի Հայոց ցեղասպանության աղբյուրագիտական ուսումնասիրությունների բաժնի (5 սեպտեմբեր, 2023 թ.) նիստում:

Քննարկմանը մասնակցել են գիտական աշխատանքների գծով փոխտնօրեն պ. գ. թ. Էդիտա Գզոյանը, բաժնի վարիչ, գիտական քարտուղար պ. գ. թ. Նարինե Մարգարյանը, բաժնի աշխատակիցներ պ.գ.թ. Ռոբերտ Թաթոյանը, բ. գ. թ. Էլինա Միրզոյանը, Նարինե Հակոբյանը և Գոհար Խանումյանը:

Հայոց ցեղասպանության աղբյուրագիտական ուսումնասիրությունների բաժնի վարիչ, գիտական քարտուղար, պ. գ. թ. Նարինե Մարգարյան

Ստորագրությունը հաստատում եմ:
«Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» հիմնադրամի գիտական աշխատանքների գծով փոխտնօրեն, պ. գ. թ. Էդիտա Գզոյան

05.09.2023 թ.